Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

05.03.2021թ.-ին կնքված թիվ PD-179-03-21
Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Ք.Երևան «08»-ը սեպտեմբերի 2021թ.

«ՀԱՅՓՈՍՏ» Փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Ցոլակ Հովհաննեսյանի, մի կողմից, և «ՀՀ Սնանկության դատարանը» (այսուհետ Հաճախորդ)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Գագիկ Գևորգյանի, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 05.03.2021թ.-ին կնքված թիվ PD-179-03-21 Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհամդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով «սահմանվում է» բառից հետո 7 200 960 (յոթ միլիոն երկու հարյուր հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել «29 603 200 (քսանինը միլիոն վեց հարյուր երեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ» բառերով:

2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:

5.Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

«Հայփոստ» ՓԲԸ /
ք.Երևան, Սարյան 22/
ՀՎՀՀ: 02507464
«Կոնվերս բանկ» ՓԲԸ/
ՀՀ: 1930003703156000
Հեռ.՝ /010/ 514-548

ՀՀ Սնանկության դատարանի աշխատակազմ/
ք.Երևան, Օտյան 53/2 /
ՀՎՀՀ/: 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն/
ՀՀ/: 900011023976
Հեռ.՝/ /010/ 74-29-20

Կոմերցիոն տնօրեն ՝ /
Ցոլակ Հովհաննեսյան/ _____

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝/
Գագիկ Գևորգյան/ _____